

Աղբիւրի յաւելուած

Լոյս է տեսնում տաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 23 կիրակի 22 յունիսի | ութերորդ տարի 1897

ԹԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրէմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտտօ-գրաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անջարանում*, մի շքեղ խրոմօ (սպառուած), 3) *Ոսկէ շղթաներում*, կամ *Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս *Պարիզի մոդաներ*, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրէմիաները ստանում է* Աղբիւր-Տարազ *միեւնոյն հասցեով գրւող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Тараз*ъ* *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Անգլիական Վիկտորիա թագուհին

(Նոր 60-ամեայ թագաւորութեան առիթով)

Այն ամսին կատարւեց Անգլիայում թագուհի Վիկտորիայի՝ այսպէս անւանուած՝ ադամանդեայ թագաւորութեան յոբելեանը։ Անգլիական ազգը բուռն հրճւանքով և պարծանքով մասնակցեց այդ շքեղ տօնին։ Թագուհու երկարամեայ թագաւորութիւնը ամբողջ մարդկային պատմութեան մէջ վեցերորդ օրինակն է համարուում։ Ձրնալելով նրա այժմեան խորին ծերութեան, նա օժտւած է հազւագիւտ առողջութեամբ։

Դեռ 18-ամեայ հասակում նա յանկարծ կոչւեց անգլիական գահը բազմելու։ Բայց նա իր երիտասարդ օրերում երկար ժամանակ չքմնաց առանց նեցուկի։ Երեք տարուց յետոյ, 1840 թ. նա ամուսնացաւ պրինց Սակսէն-Կոբուրգեան Ալբերտի հետ և նրա մէջ գտաւ ոչ միայն սիրելի և սիրող ամուսնու այլև թագաւորութեան գործերի մէջ անսահման օժտւած խորհրդատու։

Վիկտորիա թագուհի

Վիկտորիա թագուհին ընտանեկան կատարեալ բախտաւորութիւն վայելեց, առաւել ևս նրանով, որ Աստուած նրանց օրհնեց բազմաթիւ ժառանգներով։ Բայց 1861 թ. պրինց Ալբերտը կամ ինչպէս նրան պաշտօնապէս անւանում են Անգլիայում, պրինց-ամուսինը վախճանւեց, և Վիկտորիա թագուհին ստիպւած էր առաջւայ նման միայնակ կառավարել երկիրը։ Ամուսնու կորուստը նրան խորը ցնցեց։ Այնքան խիստ էր նրա սրտի համար այդ հարւածը, որ նա երկար ժամանակ չէր կարողանում ուշաբերւել և նրա բոլոր մնացած կեանքը նւիրւած էր սիրելի ամուսնու յիշողութիւններին և իր որդկերանց ու թոռների հոգսերին։ Թէ որ աստիճան չարգում էր Վիկտորիա թագուհին իր ամուսնու յիշատակը, երևում է հէնց այն փաստից, որ նա ցանկանալով ներշնչել և ուրիշների մէջ սիրոյ և չարգանքի զգացմունք դէպի հանգուցեալը, մինչև անգամ իբրև գրողուհի հրատարակեց երեք գրքի մէջ նրա հետ ունեցած կենակցութեան մասին իր յիշողութիւնները։ Եւ այդպէս Վիկտորիա թագուհին որպէս

սմուսին և մայր բոլորի համար կարող է ծառայել իբրև ընտանեկան բարքերի հազագիւտ օրինակ։

Եթէ նրա մասնաւոր կեանքից դառնանք դէպի նրա մեծ թագաւորութեան կառավարչուհու դերը, մենք առաջ պէտք է նկատենք, որ Անգլիայի քաղաքական կազմակերպութիւնը աչքի առաջ ունենալով, այդ դերը չէր կարող նշանաւոր չըլինել։ Մասամբ Անգլիայի պատմութեան ընթացքից, մասամբ իր սեպհական տրամադրութիւնից և ամուսնու խորհուրդներից, նա միշտ հասկանում էր իր կառավարչութեան բուն իմաստը, որի նպատակը խաղաղարար գործունէութիւնն էր Անգլիայում տիրող կուսակցական կռիւների դէմ։ Այս երկրի կառավարչական կեանքը որոշւում է նրա մէջ տիրող կուսակցութիւնների ձգտումներից, իսկ թագի դերը կայանում է միայն նրա մէջ, որպէս զի մեղմացնէ և ըստ կարելոյն թուլացնէ նրանց ընդհարումները։ Հետևապէս բոլոր սկսանքները, րէֆորմները և օրէնսդրական ձեռնարկները բղխում են զանազան կուսակցութիւններից և լուծւում են նրանց մէջ. միայն բացառիկ դէպքերում շատ սահմանափակ շրջանում կարող են բղխել թագից։ Այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ Վիկտորիա թագուհու թագաւորութիւնը անգլիական տեսակէտից թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ հռչակաւոր է խոշոր աջողութիւններով։

Ինչ որ վերաբերում է բրիտանական կայսրութեան արտաքին գօրութեանը, նա այս անցնող 60 տարւայ ընթացքում զարմանալի կերպով մեծացել է։ Ձեռք են բերւած բազմաթիւ գաղութներ. Վիկտորիա թագուհու օրով կազմակերպւել է ահագին հնդկական կայսրութիւնը, որպէս բրիտանական թագաւորութեան անբաժան մասը և այդ վերջնականապէս հաստատել է նրանով, որ բրիտանական թագուհին ընդունել է Հնդկաստանի կայսրուհու տիտղոսը։ Նրա թագաւորութեան օրովն է Անգլիան փաստօրէն տիրող դիրք բռնել Եգիպտոսում. իր տէրութեանը միացրել է բազմաթիւ հողեր, կղզիներ և ծովային կայարաններ։ Նրա պատերազմները մեծ մասամբ աջող էին և պսակւում էին նրա նոր հողային տիրապետութիւններով, այնպէս որ այժմ Անգլիան, Չինաստանից յետոյ իր 350 միլիոնի հասնող ժողովրդի քանակութեամբ ամենաընդարձակ կայսրութիւնն է։

Պակաս առաջադիմութեան չէ հասած Անգլիան և իր ներքին կառավարութեամբ։ Վիկտորիա թագուհու օրով նրա քաղաքական կազմը հիմնովին կերպարանափոխւել է։ Ընորհիւ ընտրողական և ուրիշ մի շարք խոշոր քաղաքական րէֆորմների, Անգլիան հետզհետէ զուտ արիստոկրատիկական երկրից դարձաւ ռամկավարական և դրանով աւելի կամ պակաս հաւասարւեց միւս եւրոպական պետութիւններին։ Ուղիղ կազմակերպւած տեղական ինքնավարութեան շնորհիւ, ժողովրդական լուսաւորութեան գործը, առողջապահական մասը, աղքատների օգնութիւնը, գործարանների հսկողութիւնը և մշակ դասի ապահովութիւնը մեծամեծ առաջադիմութիւններ են արել։ Նոյնքան նշանաւոր են և Անգլիայի առաջադիմութիւնները տնտեսական կեանքի մէջ։ Մենք աչքի առաջ չունենք ոչ այնքան առևտրականութիւնը, որովհետև այդ կողմից Անգլիան բոլոր միւս ազգութիւններից վաղուց է առաջ ընկել, որոնք նրա հետ համեմատւել մինչև հիմա էլ չեն կարող.—այլ գլխաւորապէս ժողովրդի խեղճ դասակարգերի ապահովութիւնը։ Մի շարք տնտեսական հիմնական րէֆորմների, աժանութեան և ազատ վաճառականութեան շնորհիւ Անգլիայի ազգաբնակութիւնը Վիկտորիա թագուհու օրով կրկնապատկւեց և նրա ընդհանուր բարեկեցութիւնը նկատելի կերպով բարձրացաւ։ Այստեղ միակ բացառութիւնը Իրլանդիան է կազմում,—այդ Անգլիական պետութեան մարմնի տկար մասն է։ Բայց և այստեղ չի կարելի ասել, որ Վիկտորիա թագուհու օրով իրական րէֆորմներ չեն մտած։ Գլադստընի ջանքերը՝ Անգլիայի և Իրլանդիայի մէջ կառավարչական արդար յարաբերութիւն հաստատելու, վերջերս պսակւեց տեղական, ազգային սկզբունքների վրայ հիմնւած ինքնավարութեան կազմակերպութեան աւետումով։ Մինչև անգամ Մեծ Բրիտանիայի գանձարանը պարտաւորւում է տարեկան վճարել Իրլանդիայի գանձարանին 6½ միլիոն րուբլի։ Այդպիսով Իրլանդիան մի որոշ չափով վարձատրւած կըլինի այն աններելի տուրքերի համար, որոնցով մայր երկիրը ծանրաբեռնում էր նրան։

Այն ժամանակւայ նուրբ նկատողներից, լորդ Բրուքը, Վիկտորիա թագուհու գահակալութեան առիթով հետևեալն էր գրել. «Մատաղ 18-ամեայ աղջիկը, որ մանկանոցից յանկարծ գահ է բարձրացել, չի կարող նախապատրաստւած համարւել մեծ երկրի կառավարութեան համար այս դժւար ժամանակամիջոցում, որում մենք ապրում ենք, թէև նրա ընդունակութիւններն էլ շատ նշանաւոր լինէին։ Բայց ամենայն երկիւղ էլ պէտք է անյապաղ չքանայ, տեսնելով, թէ ինչպիսի տենդային անձնւիրութեամբ ամբողջ երկիրը, փոքրից մինչև մեծը ողջունում է իր նոր թագուհուն»։ Այս տողերը գրելուց յետոյ անցել է 60 տարի, և միայն շատ քիչ ծերունիներ են յիշում այն հրճւանքը, որով անգլիական ժողովուրդը ողջունում էր իր թագուհուն նրա գահակալութեան միջոցին։ Բայց նրա զգացմունքները չեն փոխւել։ Եւ այժմ, երբ հասաւ նրա նոր հրաշալի յոբելեանը, ամբողջ երկիրը, բացառութեամբ Իրլանդիայի, շտապեց արտայայտել նրան իր անձնւիրութիւնը։ Լոնդոնում այնքան շատ են եկւորները, որ անգլիական մայրաքաղաքի բնակչութիւնը ներկայ տօների առիթով հասաւ 4½ մինչև 7 միլիոնի։ Հիւրեր էին եկել ամենայն կողմից, Բրիտանական կայսրութեան բոլոր մասերից, այսինքն աշխարհիս բոլոր ծայրերից։ Տօնախմբութիւնը վիթխարի բնաւորութիւն էր ստացել։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդպիսի հանդէսը չէր կարող չըզարթեցնել համակրական զգացումներ և միւս ժողովուրդների մէջ։ Որքան էլ որ շատ դէպքերում Անգլիայի և միւս պետութիւնների ճանապարհները բաժանւէին միմեանցից, Վիկտորիա թագուհին, որպէս ընտանեկան ամուր սկզբունքի աչքի զարնող ներկայացուցչուհի և իր ժողովրդի հետ միացող օրինակելի կառավարչուհի, կարող էր հաւատացած լինել այն համակրութեան մէջ, որ նա հանդիպեց ամենայն տեղ, որտեղ դէպի այդ երկու մասնաւոր և թագաւորական կեանքի սկզբունքները սիրով և յարգանքով են վերաբերւում։

Ս Ա Փ Ո *)

Պօեմա

VI

Փիշերայէն երկինքը լայն
Խաղաղանիներ իր ծոցում
Ամփոփել է երկիրն համայն։
Իր թաց քօղն է նա գըցում,
Իբր նրբահիւս մի սարդոստայն,
Դաշտերի վրայ ու ծաղկանց,
Անտառի վրայ անթափանց։
Լէվկադիայի լուսինն իր վառ
Լոյսն է թափում դէպի ցած,
Իր սատաֆէ դեղանըկար
Ձրջանակով պըսակւած։
Հովը թեթեւ դողդողում է
Ջերմ օդի մէջ և սողում է
Հովտի միջով անուշահոտ,
Մինչ արձակում է մի թարմ հոտ
Անտառն ասես շնչելով,
Սօսափիւնով փըչելով։
Ծովըն անհուն լայն ու խաղաղ,
Սնդիկի պէս տարածւած,
Ձրջանակում արծաթաշաղ
Թրմրուքեամբ է համակւած։
Երկինքը խոր աստեղաշար
Ձուրջ կապել է իր ճոխ կամար,
Եւ ողջ երկիրը ոսկէսփիւռ,
Ասես դարձած ապարան՝
Կերտւած ձեռքով մոգական
Մի երազի, քաղցրահամբոյր
Ու մեղմանիներ փափկուքեան
Մէջ հանգիստ է վայելում։
Պատկերն ամբողջ բընուքեան,
Կարծես մաքուր հայելում,
Օդի մէջ է նըկարւում,
Խուռն խմբերով է շարւում՝
Մրտախոհ ու հանդիսական,
Իբրև աշխարհ կախարդական։

Փ ա ո ճ

Այս բլրի վրայ բարձրանիստ,
Որտեղից թատրը բընուքեան,
Առնելով քաղցրը հանգիստ,
Փռւում է այժմ մեր յանդիման,
Ի՜նչ գեղեցիկ է նա, Օրիօն.

Որքա՜ն խորհուրդ նրա ծոցում,
Նրա՛, որ մարդկան է ամբիօն,
Նրա՛, որ է ծանր մի հարցում։
Այն երկինքըն աստեղաշատ,
Նրա քընացած խոր անդունդ,
Օ, ի՜նչ կեանքեր ունի նա շատ
Եւ որքան մահ ու ծընունդ։
Յաւերժական ամայութեան
Մէջ կան աստղեր դարերով,
Ձատերն պաղած, շատերն կենդան՝
Իրանց տարբեր կեանքերով։
Ողջ բընութիւնն իր բեղմնաւոր
Յղութեան մէջ մշտական
Ծընունդի սկիզբն է գլխաւոր,
Ամեն բանի հիմ, պայման։
Եւ մահը, որ հսկում է նրան,
Վախճանն ամեն գոյութեան,
Ջի՞ նա նոյնպէս և օրօրան
Դարձեալ նոր-նոր ծընդեան։
Այսպէս, ամենն էլ ծնւում է
Եւ մահանում, մշտական
Մի շարժման մէջ, և սակայն
Ա՛յն, ինչ արդէն գտնըւում է
Վերջին մահւան վիճակում,
Ա՛յն նորից էլ չէ ծագում։
Եւ այսպէս միշտ ամեն պայման
Փոփոխւում է, հինըն անկման
Ի մատնըւում և նորը
Գառնում է այժմ հըզօրը,
Ըսկսում է իր շրջանը,
Մինչ լրանայ ի՛ր պայմանը։
Որքա՜ն հարցեր և ի՜նչպիսի...
Ա՜հ, ի՛մդ Օրիօն, պէտք է գա՛յ
Այն օրն արդեօք, երբ մարդ լըսի,
Որ հանելուկ էլ չըկայ
Բընութեան մէջ ու կեանքում,
Երբ հասնէ բարձր աստիճանի—
Գտնէ մտքի երկունքում
Խօսքը սկզբի ու վախճանի....

Օ ր ի օ ն

Գուցէ... Մտքի ասպարէզը՝
Տիեզերքի պէս ընդարձակ՝
Գըրաւել է նրա երեսը,
Սըլաքի պէս է համարձակ,
Իր անհանգիստ տագնապներում
Նա միշտ քննում է և փնտռում,
Եւ այն, ինչ նրան հարց էր երէկ,

*) Տես Տարազ № 22.



Մեր Նիկարտ (*Շոսլանդիայի ճարտէի*) հանդիսական Ֆիլիպոսը բռնչին.

(Վաւերական ձիարդ. փոտագր. Նեւսի:)

Այսօր պարզ է որպէս ցերեկ։
Եւ աստւածներն, որ զարդացած
Տիպարն են մեր, մեծ չքնն նրանք
Միթէ նրանով լոկ, որ հասած
Ու աճած են մտքով իրանք
Խորութեան ու զօրութեան
Եւ զգացումով՝ վեհութեան։
Դա է մարդըն ապագայի
Երազի մէջ մեր ներկայի։

Փ ա օ ն

Դուցէ—ասիր... Այո, գուցէ...
Տարակուսանք—խօսքըդ ահա,
Եւ տանջանքի դուռը բաց է,
Տանջանք դառըն ու անխընայ,
Որ կաշկանդում է միտքը,
Բանում սրտում մեր վէրքը։
Օ՜, եթէ ես չունենայի
Տարակոյսի մըթութիւն
Եւ եթէ ես կարենայի
Փիտենալ մարդու էութիւն,
Ո՞րպիսի լայն մի շերտ լոյսի
Կըտարածւէր իմ աչքիս,
Մինչդեռ հիմա տարակոյսի
Խօսքը մահն է իմ մտքիս...
Ի՜նչ դեղեցիկ է բընութիւն.
Որքան, որքա՜ն կուզէի
Ձուլել նրա հետ իմ գոյութիւն,
Նրա հետ զգալ, խօսէի...
. . . . . .
Բայց ինչ է, որ լըսում եմ ես...
Արձագանգը հարում է
Ինչ-որ մի ձայն, որ մեղմապէս
Հանդարտ օդում մարում է։
Ինչ-որ հառաչ, թեթև ու սուր
Քան դեւիւռը, թռչում է.
Մի ձայն լալկան, մի ողբ տրխուր
Լըռութեան մէջ կորչում է՝
Նախ կտրելով խոր մըրափ
Ու թմրութիւնն բընութեան։
Բայց տե՛ս, ահա քընաթափ
Երկինքն յանկարծ ցնծութեան
Մէջ կարծես լի է ձայներով.
Անտառն զողում է սըլծափւած,
Երկիրն թնդում է երգերով.
Ամեն կողմից ասես թափւած
Հնչունները սաւառնում են
Օդում, չորս կողմ երկնի տակ.
Հրմայք, երկիւղ, դող խառնում են
Նրանք իրար հետ ներդաշնակ...
Ահա նորից խոր լըռութիւն,
Մէկ ահաւոր մեռելութիւն...
Ա՜հ, ո՞ւր եմ ես... Աստղերն վերև
Ձպճրպում են զարմացած՝
Խանգարւած քունն իրանց թեթև.
Ահա քանի՜ օն ընկան ցած,
Թողնելով գիծ իրանց ետև...
Ի՜նչ կախարդանք երկիւղած...

Օ ր ի օ ն

Ահա նորից ըսկսւեցաւ
Տարօրինակ նըւագը.
Կրկին անտառը զարթեցաւ,
Տնքաց ձորի յատակը։

Փ ա օ ն

Տես, բընութիւնն շունչ է առնում՝
Պէսպիսագոյն ըզգեստում...
Նա կարծես թէ պար է բռնում,
Չէ զադարում, չէ նստում։

Օ ր ի օ ն

Ինձ թրւում է, թէ երկնքում,
Ինչպէս ծովում, հանդիստով
Անթիւ նաւեր այն բարձունքում
Ճեմում են ծանր ու նազով...

Փ ա օ ն

Չի՞ն դրանք արդեօք աստւածները
Անում հըրաշք թովչական...
Բայց լսում եմ հարւածները
Մի քընարի սքանչական...
Նորից ամեն ձայն կտրւեց
Եւ հաղիւ հազ լըսելի
Ինչ-որ մի լար կրկին խըրխեց
Տրխուր շեշտով...

Օ ր ի օ ն

Նազելի
Սաֆոն է դա ծովի ափին...

Փ ա օ ն

Սաֆո՞...

Օ ր ի օ ն

Միթէ չես դուշակում
Նրա քընարը... Լըսիր զարկին...
Դու թոյն լըցրիր նրա բաժակում...
Մենակութեան մէջ տրտմական,

Ծովի ափին կախարդական
Ծաղկում է նրա հըմայքը։
Այդ վայրերում երազական,
Խորհրդաւոր ու լըռին
Ջերմացնում է զմայլանքը
Նա իր սիրոյ վառ, բայց անյոյս,
Երազում է, փոթորկում
Եւ տակաւին ինք մատաղ կոյս
Սիրոյ հետ մահն է երգում։

Փ ա օ ն

Սաֆո... Ի՜նչ դող և ի՜նչ մըրըրիկ
Յանկարծ ծագեց իմ սրտում։
Սիրո՞ւմ է ինձ... ա՜հ, ի՜նչ չարիք.
Ձակատագիր սև՜, տրտո՜ւմ...
Արեգը, որ այնպէս պայծառ
Վերն փայլում է ամեն օր.
Այն աստղերի ոսկեղէն շար,
Որին Հարցեր նորանոր
Տալիս եմ ես գիշերները.
Այն երկինքը նուրբ օդով,
Հէլլադայի աղջիկները
Իրանց սիրոյ կարօտով,
Դո՛ւ, իմդ Օրիօն, արիւնս անգամ—
Ոչինչ չէ քաղցր ինձ այնքան,
Որքան Սաֆոն, այդ անթառամ
Պըսակակիրն աննըման։
Եւ սակայն խիստ աստուածները
Իրանց ցասման մի ջոցին
Բախտիս տուին հարուածները—
Մինաց օտար վառ բոցին։
Ամենն ինչ որ է երկրային,
Ընչին թըւաց իմ աչքին
Այն օրից, երբ գերբընական
Լոյսը բացւեց իմ մտքին։
Մի գօրութիւն ինձ մըղում է
Երկրից հեռու, դէպի վեր,
Եւ զգացումըս իմ պաղում է
Դէպի հողը բազմավէր։
Ոչինչ ինձ չէ կապում դըրան,
Եւ մտքերից անմարմին
Ես տանջւում եմ—և իմ վրան
Ամային է օդային.
Նոյն ինքն անդամ բնութիւնը,
Եւ ամբողջը, գոյութիւնը
Միշտ նոյն հարցն է դառնագին...
Սիրե՞լ Սաֆոն... կարո՞ղ եմ ես...
Ա՜հ, կուզէի այդ չերմապէս,
Բայց անզօր եմ։ Ինքս օդեղէն
Ու թափանցիկ էակի պէս՝
Սիրոյ զգացումը հրեղէն
Ընչով գալիս է գաղտնաբար,
Փայփայւում է մտքիս հետ,
Խօսում սրտիս անուշաբար
Եւ չըքանում է անհետ,
Ասես թէ ծուխ։ Լուսաւորում
Է նա սիրտս, բայց չէ այրում.
Հոգուս գատարկն նա լցնում է,
Բայց նրան չէ տիրանում.
Միտքս բորբոքում, եռացնում է,
Բայց իրան հետ չէ տանում...
Սիրե՞լ Սաֆոն... Օ, ի՜նչ պաղիժ,
Որ ինձ տւել են աստւածները.
Սիրել—անզօր եմ ես։ Ուրիշ
Մտքեր, ուրիշ զգացումներ
Են ինձ բաժին ու պայման.
Եւ ապրում եմ դրանցով,
Որոնք իրանց խիտ ցանցով
Տիրել են ինձ յաւիտեան...

Ա. Լ.

(Կըճարունակւի)

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Փիօրենցինիի

(Շարունակութիւն *)

XXXVI

ԱՌԱՒՕՏ

Բիւզանդիոնի կայսրուհին սովորութիւն ունէր ամենայն առաւօտ, երբ անկողնից վեր էր կենում, մտնում էր անուշահոտ լողարան, յետոյ գնում էր սեղանատուն, ուր պատրաստւած էր լինում շքեղ նախաճաշ, որից յետոյ սկսւում էր խընդրատուների ընդունելութիւնը։ Մեր նկարագրած առաւօտը կայսրուհու ընդունարանում շատ մարդ էր հաւաքւել։ Այնտեղ կային՝ կոմսեր, իշխաններ, բարոններ և պատրիկներ, որոնք համբերութեամբ սպասում էին կարգին, որպէս զի ընդունէ նրանց Բիւզանդիոնի հրամանատարը։ Շատերը սպասում էին այդ բախտին մի քանի օր շարունակ։ Այն առաւօտ, որի մասին լիշւում է այստեղ, ընդունարանը մտաւ մի գեղեցկուհի՝ բարձրահասակ, արտայայտիչ դէմքով և չընայելով, որ նա ամենքից ուշ եկաւ, խընդրեց որ իսկոյն յայտնեն իր մասին կայսրուհուն։ Այդ խնդիրը այն աստիճան համարձակ էր, մինչև անդամ աւելին՝ յանդուգն, որ ներքինին հարկաւոր համարեց անյապաղ խոնարհւելու, ընդունելով խնդրա-

*) Տես Տարազ № 22.

Անգլիական օրիորդի տիպ.

Թոմաս Ռաւդոնի նկարից.

տու կնոջը մեծ անձնաւորութեան տեղ, որ յայտնի էր կայսրուհուն: Վերջինի վերաբերութեամբ զեկուցանողը չըսխալուեց: Թէոդորան իսկոյն հրամայեց ներս բերել խնդրատու կնոջը իր մօտ առանձնասենեակ: Այցելու կինը երբեմն կուրտիզան էր եղել և բարեկամ էր արհեստակից ընկերուհի Թէոդորային:

—Որքան ուրախ եմ քեզ տեսնելովս, իմ թանգագին Մակեդոնիա, ասաց Թէոդորան, զգուելով մտնող կնոջը: Դու շատ լաւ ես արել, որ ուղարկել ես ինձ մօտ քո զեղեցիկ Իրէնային: Նա էլ քեզ նման զեղեցիկ է: Ես կաշխատեմ մի հարուստ փեսացու գըտնել նրա համար:

Մակեդոնիան եկել էր Հայաստանից Կոստանդնուպոլիս իր միակ աղջիկ Իրէնայի հետ, ժառանգութիւն ստանալու համար: Ներկայացնելով իր աղջկան կայսրուհուն, նա ինքն էր եկել խնդրելու նրա ողորմածութիւնը և պաշտպանութիւնը: Այն ժամանակ, երբ խօսակցութիւն սկսւեց երկու ընկերուհու մէջ, Թէոդորային կանչեցին մի գաղտնի սենեակ:

Մակեդոնիային մենակ թողնելով, Թէոդորան շտապեց մտնել գաղտնի սենեակ, շատ լաւ իմանալով, որ եթէ նրան կանչում են այնտեղ, ուրեմն շատ կարևոր գործով է, որ յետաձգել չի կարելի:

Եւ իրօք այնտեղ կանգնած էր նրա հաւատարիմ ծառայ Ջուզեպպէն: Սովորական ողջոյնը տալով նրա ոտների առաջ, Ջուզեպպէն ասաց.

—Ես եկել եմ քեզ յայտնելու, թագուհի, որ քո սուրբ անունդ վիրաւորել են:

—Պատմիր տեսնենք:

—Դու գիտես, թագուհի, որ գլխաւոր փողոցի վերջում, այն շինութեան գլխին, որ նորոգւում է, գրած է և օգոստափառ ամուսնուդ անունը: Զարագործ վիրաւորողը Թէոդորա անունը փոխել է Թէմոնադորա:

—Ո՞վ է այդ անպիտանը. ասա ինձ նրա անունը:

—Նրա անունը, թագուհի, Բասսիանո է:

—Այն երիտասարդը, այնքան գեղեցիկը:

—Այո, հէնց նա:

—Նա կարծեմ պատկանում է կանաչների կուսակցութեան:

—Այո, թագուհի:

—Պէտք է պատժել չարագործին: Նա կարծեմ մի քանի օր առաջ անթիւ հարստութիւն ձեռք բերեց իր մի ազգական ծերունի Սիլէնայի մահից յետոյ: Պէտք է հրամայել, որ գտնեն օրէնքի մի յօդած, որի հիման վրայ կարելի լինի ժառանգութիւնը փոխել յօգուտ պետական գանձարանի: Ես դրա մասին կըմտածեմ: Կարող ես գնալ,—աւելացրեց Թէոդորան և ի նշան աւանձին ողորմածութեան, թոյլատրեց Ջուզեպպէին համբուրել իր ձեռքը:

Երբ որ դուրս եկաւ Ջուզեպպէն, Թէոդորան հարցրեց օրագահ ներքինիին, թէ ո՞վ կայ դարձեալ ընդունարանում:

—Շատ շատերը,—պատասխանեց գլուխ խոնարհելով ներքինին. ժեներալ Ջիովաննի, ծերակոյտի անդամ Իուֆրոնիո, կոմս Ստեֆանո, դուքս Անտիմո...

Ամեն մի անուն արտասանելու ժամանակ նա անբաւականութեամբ ծռմռում էր դէմքը:

—Թող սպասեն—արհամարհանքով ասաց նա և գնաց իր բարեկամուհի Մակեդոնիայի մօտ:

—Ասա, բարեկամս, ինչո՞ւմն է կայանում քո խնդիրը, դարձաւ Թէոդորան իր ընկերուհուն:

—Թագուհի,—պատասխանեց Մակեդոնիան,—ես եկել եմ խնդրելու ձեր պաշտպանութիւնը, օգնեցէք ինձ, այլապէս ես կորած եմ:

—Ի՞նչ է պատահել, իմ սիրելի Մակեդոնիա, ասա:

—Ձեզ յայտնի է, թագուհի, որ ես հանգուցեալի հետ ապրում էի երկար տարիներ քաղաքական ամուսնութեամբ: Նա միշտ ինձ իր օրինաւոր ամուսին էր ցոյց տալիս, որև իսկապէս էլ, թէպէտ մենք պսակած չէինք: Իմ սիրոյ և հաւատարմութեանս համար հանգուցեալը ինձ միշտ ասում էր, որ առատօրէն կըվարձատրէ ինձ: Դժբախտաբար նրա անակնկալ մահը չըթոյլատրեց նրան կատարելու իր ցանկութիւնները: Այժմ մեռած Չերիլլոյի եղբօրորդիքը ուզում են խլել իմ հանգուցեալ բարեկամի ամբողջ կալւածքները և հարստութիւնները և ես աղքատ կըմնամ:

—Եղբօրորդիքը իրանց իրաւունքները դատարանով են պաշտպանում, հարցրեց Թէոդորան:

—Այո, թագուհի:

—Դու չըգիտես, որ դատաւորի մօտ է այս գործը:

—Նա Լիւչիանոյի մօտ է, նրանից է կախւած ամբողջ վիճակս...

—Լաւ, ես կըտեսնւեմ Լիւչիանոյի հետ:

—Ուրեմն ես կարո՞ղ եմ յուսալ, թագուհի:

—Ի հարկէ, կարող ես,—ժպտալով պատասխանեց կայսրուհին,—այս օրից ես վերցնում եմ քեզ իմ հովանաւորութեան տակ:

—Օ՜, թագուհի, ես չըգիտեմ ինչպէս շնորհակալութիւն յայտնեմ, աղաղակեց Մակեդոնիան. —Ձեզ նման փաստաբան ունենալով՝ ես երբէք գործս տանուլ չեմ տայ:

—Այժմ կարող ես գնալ, իմ սիրելի Մակեդոնիա:

—Ես գնում եմ, թագուհի, ուրախ սրտով, և այդ ուրախութիւնով ես ձեզ եմ պարտական: Թոյլ տուէք համբուրել գոնէ ձեր ոտքի ծայրերը:

—Համբուրիր, եթէ այդ քեզ դուր է գալիս,—ժպտալով պատասխանեց կայսրուհին:

Մակեդոնիան ընկաւ հզօր կայսրուհու ոտքերի առաջ:

—Թող ձեր սուրբ ոտքերի այս ջերմ համբոյրը, թագուհի, գոնէ ապացոյց լինի իմ անսահման շնորհակալութեան ձեր բարերարութիւնների համար:

Մակեդոնիայի դուրս գնալուց յետոյ, կայսրուհին հրամայեց կանչել Լիւչիանոս դատաւորին: Ներքինին վազեց կատարելու հրամանը, բայց վերադարձաւ՝ լուր բերելով, որ Թագուհու սուրհանդակ Արիստոն, վերադառնալով Ասիայից, խնդրում է անյապաղ ներկայանալ: Սուրհանդակը ներս եկաւ: Խոնարհեցնելով գլուխը մինչև գետին, նա սպասում էր ԹոյլտուԹեան իր զեկուցումը սկսելու:

—Կարող ես վեր կենալ,—ասաց Թէոդորան, և հաղորդել ինձ, կատարեցիր արդեօք իմ հրամանները:

—Կատարեցի, Թագուհի,—պատասխանեց վեր կենալով, սուրհանդակը:

—Ո՞րտեղ գտար Ֆացիոլին:

—Երուսաղէմում, Թագուհի:

—Ի՞նչ է անում նա այնտեղ:

—Աբեղայ է դառել:

—Աւելի լաւ նրա համար, - ասաց Թէոդորան:— Բայց չգիտե՞ս արդեօք որտեղ է նրա բարեկամ Ջիովաննի Արաբոն, հարցրեց նա:

—Ջիովաննի Արաբոն ուղեկցել է Ֆացիոլին մինչև Երուսաղէմ: Սկզբում նա ուզում էր աշեղայ դառնալ Ֆացիոլի հետ միասին, բայց յետոյ փոխեց իր դիտաւորութիւնը և կարծեմ ուղևորւել է Անտիոք:

—Իսկ նրա հին բարեկամ Փիլիպպոսը, դու չգիտես ո՞ւր է նա:

—Փերունին միշտ ուղեկցում է իր երիտասարդ բարեկամին և ինչպէս ես լսացայ, նա ուզում է գալ Կոստանդնուպոլիս: Ջիովաննին կարծէք միշտ հոգսերի մէջ է և առ հասարակ դժբախտ է:

—Դու չգիտե՞ս նրա վշտի պատճառը—հարցրեց Թէոդորան:—Կարելի է անյուսալի սէրն է:

—Չեմ կարծում: Ինձ թւում է, որ դա մի անյպատակ ճանապարհորդութիւն է: Երիտասարդը, Թողնելով զինուորական ծառայութիւնը, միով բանիւ չկարողացաւ գտնել մի հաստատ ճանապարհ:

Արձակելով սուրհանդակին, Թէոդորան հրամայեց կանչել Լիւչիանոս դատաւորին: Դա մի Թարմ և առոյգ ծերունի էր, բարձրահասակ, ամուր կազմուածքով, մեծ մօրուքով, փայլուն աչքերով և դէմքի ազնիւ արտայայտութեամբ:

—Լիւչիանո,—ասաց նրան կայսրուհին,—ինձ յայտնեցին, որ քեզ է յանձնուած Հանգուցեալ Զէրբիլլոյի եղբօր որդոց վէճի գործը Մակեդոնիա այրիի հետ:

—Թագուհի, Մակեդոնիան Զէրբիլլոյի ապօրինի կինն էր, ուստի նրա պահանջները, որպէս նրա այրիի, միտք չունին:

—Ի՜հ, դրա հետ ես չեմ կարող համաձայնուել: Մակեդոնիան Զէրբիլլոյի հետ ապրել է մի քանի տարի և նրա հաւատարիմ ընկերուհին էր:

—Թող այդպէս լինի, եթէ այդ ձեզ դուր է գալիս, Թագուհի:

—Ե՞րբ ես ուզում դրել այդ գործի վճիռը:

—Չէնց այսօր, Թագուհի, սևն արդէն պատրաստ է:

—Ձե՞ս կարող ասել արդեօք ո՞ւմ օգտին կը լինի:

—Իհարկէ Զէրբիլլոյի եղբօր որդոց օգտին: Նրանք են իրանց հօրեղբօր օրինաւոր ժառանգները:

—Բայց ես լսել եմ, որ հանգուցեալը կտակում է ամբողջ կալուածները Մակեդոնիային:

—Կտակը ապօրինի է, Թագուհի:

—Ի՞նչու:

—Որովհետև ձևականութիւն չէ պահպանած, յետոյ, որ գլխաւորն է,— Զէրբիլլոն խելագարուած էր երբ ստորագրում էր կտակը:

—Ո՞վ է վկայում այդ:

—Հանգուցեալի բժիշկը և բոլորեքեան տանը գտնուղները:

—Կեղծ վկաներ են:

—Թագուհի, նրանք բոլորն էլ ազնիւ մարդիկ են, որոնց կարելի է կատարեալապէս հաւատ ընծայել:

—Ես կրկնում եմ, որ նրանք կեղծաբար են վկայում, աղաղակեց Թէոդորան վեր կենալով տեղից և յօնքերը կիտելով:

—Ինչպէս կը ցանկանաք հրամայել, Թագուհի, այնպէս էլ կը լինի, պատասխանեց ծերունին, խոնարհելով գլուխը:

—Դու չըպէտք է ուշադրութիւն դարձնես վկաների ցուցմունքներին: Զէրբիլլոն երկար ժամանակ ապրում էր Մակեդոնիայի հետ ինչպէս ամուսին, նա ցանկացաւ պարգևատրել նրան և յայտնեց այդ ցանկութիւնը իր մահից առաջ: Նրա կամքը պէտք է սուրբ լինի:

—Կատարւած կըլինի, Թագուհի, պատասխանեց դատաւորը:

Ինչպէս կարող էր նա հակառակուել հզօր կայսրուհու կամքին: Որքան էլ տանջում էր ծերունուն իր խիղճը, բայց և այնպէս նա պէտք խնամարհուէր:

— Զէրբիլլոյի Թողած հարստութիւնների Թւում կայ մի հրաշալի դղեակ Պրոպոնդիտօ անունով. ինչպէս ես հաւանում այն:

—Ե՞ս, Թագուհի,—զարմացած հարցրեց ծերունին:

—Այո, հէնց դու, որովհետև Մակեդոնիան առաջարկում է քեզ վերցնել այդ դղեակը քո աշխատութեան համար: Կարող ես գնալ:

Լիւչիանոն Թագուհու այս վճռին էլ չէր կարող հակառակուել և ուզում էր գնալ: Թէոդորան նրան կանգնացրեց.

—Ես ուզում էի քեզ հետ ուրիշ գործի մասին խօսել, ասաց նա նրան:

—Հրամայեցէք, մեծ Թագուհի, ձեր անձնուրաց ստրուկը պատրաստ է կատարելու ձեր հրամանը:

—Դու ճանաչում ես երիտասարդ Բասսիանոյին: Նա մեղադրւում է ամենասարսափելի քրէական յանցանքի մէջ: Այս օրերում նրան կըձերբակալեն և կը-

զցեն իմ բանտերից մէկը, Հարց ու փորձ արա՛ և եթէ մեղադրեալը խոստովանէլ, ենթարկիր տանջանքներ։ Հարց ու փորձ արա՛ նոյնպէս և նրա ծառաներին ու տանը գտնուղներին, ենթարկիր տանջանքների, որպէս զի Բասսիանոյի յանցանքները երևան գան, յետոյ գրի՛ր դատավճիռը։

—Լսում եմ, Թադուհի—և այս անգամ պատասխանեց դատաւորը, իսոնարհութեամբ ողջունելով։ Ես կամքը կրկատարէի։

Պէտք է ի նկատի ունենալ, որ ազահ Թէոդորան մեղադրում էր Բասսիանոյին ոչ այն յանցանքի համար, որի մասին ամբաստանել էր Ջուզեպպէն։ Կայսրուհին աւելի ծանր մեղադրանք գտաւ երիտասարդ Բասսիանոյի համար, որով, բացի մահուան դատավճիռը, նրա բոլոր կարողութիւնը պէտք է անցնէր պետական գանձարանին։ Իր հաստատիմ ծառաների օգնութեամբ, նախկին կուրտիզանը պատրաստել էր անթիւ վկաների ցուցմունքներ Բասսիանոյին մեղադրելու համար։ Չբաւականացով դատաւոր Լիւչիանոյին տանջանքի ենթարկել նրանց, որոնք չեն վկայել իր ցանկութեան համեմատ, Թէոդորան յոյս ունէր այն դժբախտ ստրուկների և Բասսիանոյի ազգականների տանջանքի սարսափի վրայ, որոնք կըհամաձայնեն ցոյց տալ ոչ այն, ինչ որ ցանկանում էր կայսրուհին։

(Կըշարունակի)

Ն Ր Ա Ն

Թո՛ղ ես մարդիկ ուիրեն
Երկինք, երկիր, տիեզերք,
Այդ բոլորի փոխարէն
Միայն կ՚երգեմ ես մի երգ։

*

Թո՛ղ տան ոսկիք բիւրաւոր
Եւ գեղաշէն պալատներ,
Մի սիրտ ունիմ վիրաւոր
Ա՛յն ես կրտամ քեզ նըւէր։

ՄԻՒ-ԿՈՆՕ

Դրականութիւն

ՕՍԿԻ ՇԻՊԼԻՆ

Կրդի դերման վիպասանութիւնը իր պատմութեան մեծագոյն ներկայացուցիչներն ունի այժմ։ Ֆրիդրիխ Շբիլլերը, Տաո, Կեօրկ Էպերս, Բաուլ Հայզե, ներկայումս գրական անդուլ գործունէութեան մէջ են։ Նրանց վրայ լսօսելն ուրիշ առթի վերապահելով, ուզում եմ այսօր ծանօթացնել մի վերին աստիճանի օժտեալ հեղինակ, լաւագոյն վիպասանը՝ ըստիս, զոր ցարդ արտադրած է Գերմանիան, Օսիբ Շուպլին, իսկական անուամբ Ռ. Լոյա Դիրեհեր։ Սա միացնում է գերմանական խոր մտածութիւնը և զգացումը ֆրանսական եռանդին ու սրամտութեան, և յառաջ է գալիս մի գմայլելի շարք ընկերական բարքերի ճշմարիտ պատկերների, ռէալիստական և սակայն բանաստեղծական ևս, զի գրողը մի մեծ բանաստեղծ է հոգւով։ Իր վէպերը ճշմարիտ էքոսներ են սրտի, մեր շուրջը ամեն օր դարձած կեանքին, առանց գեղեցկացման և առանց բռնի տգեղացման։ Զի թէև իր նիւթերը յաճախ ազնւական կեանքից է առնում, և սակայն չէ գեղեցկացնում զայն Շուպլին։ Ընդհակառակն, ինչ որ ներկայիս արիստոգրատիան ունի պարապ, ապականող, կեղծ ու փտած, փայլի ներքև սուտն ու տգեղն, ճոխութեան ներքև պարտքն ու գրաւը, առերևոյթ լուսաւորութեան ներքև ու հետ կատարեալ տգեղութիւն և իմաստակութիւն, և այդու հանդերձ հին, խրոխտ հայեացներն, ըստ որս մարդն բառնի աստիճանէն սկսեալ մարդ է միայն, անխնայ ցոյց կըտայ զայնս, կենդանի, միս ու ոսկոր, առաջնիս ապրելով, խօսելով ու շարժելով, որպէս որ է. նոյն ատեն հազւագիւտ մնացորդները նախկին ճշմարիտ, ազնիւ ազնւականութեան, տիպար պատուոյ, ուղղութեան և փափուկ զգացման, բացառութիւնք՝ ուր իրաւն ու գեղեցիկն ապաստանած է, ինչպէս դատաւոր, հսկայ կաղնիներ՝ նոր, թզուկ ծառերու անտառի մէջ կորսուած։ Այնպէս կենդանի ու հաւատարիմ նկարում է արտիստների այլազան, յուզեալ կեանքը, յուսով, պատրանքով, երբեմն մի քիչ փառաք, յաճախ նօթութեամբ, մի խաբուսիկ ճառագայթով, որի հետևի երկար գիշեր, սխալմունքներով, անհոգութեամբ, զարթութեամբ և լացով լի. կեանք, որ երիտասարդ, գեղեցիկ, հարուստ ամուսնացած, երջանիկ արտիստն անում է ծեր, աննկեալ, խաղամոլ ու գինով, կորզած մի դեկոր, մի décavé, որ իր որդուն ամաչում է ասել թէ ինչ իր հայրն է, և աւարտում է անձնասպանութեամբ. կեանք, որ պարկեշտ, պատուաւոր ընտանեաց աղջիկն, խաբուսիկ հրապոյրներով, փայլով ու արտիստական համբաւով, տանում է սխալման, ու չետոյ գոյում պոհէմների կարգը, ուստի գրեթէ երբէք ազատում չունի այլ ևս—հակառակ բոլոր ճգերի, կըզգայ կապարը թևին վրայ, իր ևս քեւերն են կոտրած. ահագին ազգը նկարիչների, երաժիշտների, բանաստեղծների, դերասանների, մեծաւ մասամբ լինել ուզողների միայն, բոլոր այդ Պոհէմը, Եւրոպայի գաղթիլադեռը, ցոյց է տալիս մեզ Շուպլին, վառ, ճշմարիտ դոյներով, իսկական՝ ինչպէս մի ֆոտոգրաֆի։ Եւ ինչ որ սիրեցնում է իր պատկերը, այն է, որ զգում ենք, մի սիրտ բաբախում է հոն, որ դա մի պարզ դիտողութիւն չէ, անտարբեր վիրաբոյժի մը կողմանէ. ոչ, գրողը մարդ է, սրտի տէր, ու յաճախ աչքերը արցունք լցուում են, թէև իր ակնարկը չէ խռովում... ու ճշմարիտ են իր վէպերը որպէս մի խոստովանութիւն,—իրական զգացմանց աշխարհը, վախցնելու աստիճան. կարծես սիրտը ձեռքն առած կտրում է, ցուցնում է մէն մի երակները։ Տկար, կանացի զգայնկութիւն չըկայ բնաւ. անողոք, մանրակրկիտ քննութիւն։ Երբ իր առաջին գործերը լոյս տեսան և իր անունը մի առեղծած էր տակաւին, շատերը կարծեցին հեղինակը մի ծեր դիպլոմատ է... իր սեռին յատկութիւններէն պահած է Շուպլին մի խիստ սուր դիտելու և հասկնալու կարողութիւն և ճշմարիտ, բարձր կանանց յատուկ ջերմ ու վեհ մտածումը ու զգալը։

Ռէալիստ է Շուպլին, գրեթէ միշտ, երբեմն անգութ լինելու չափ, ու դրանով մօտենում է ֆրանսացի նոր վի-

պասաններին, Մոբասանի, Պուրժէի, Տոտէի, որու արդէն, ի հարկէ ակամայ, բնութեամբ շատ նմանում է, զի նա ևս մի ռէալիստ է ու միանգամայն բանաստեղծ, լի երևակայութեամբ, աւիւնով ու զգացմամբ։ Իսկապէս երկուքն ևս նոյն ընտանիքէն, ծնեալ բանաստեղծք՝ որու դէմ մաքառում է կամաւոր ռէալիստը։ Եւ սակայն, չըհոկւած մի ժամուն, զեղուում է երբեմն հոգին, ու բանաստեղծը խօսում ազատ, մի վայրկեան իրաւ, բայց ինչ սրտալիր, գեղեցիկ ու մաքուր! կարծես ողբալու իր լուսթեան վրայ։ Մի թարմ գարնան երգ։ Թէ Ժուպին այդ երգն չէ արհամարհում, ցոյց է տալիս սա փաստը որ երբ մի քանի տարի առաջ ներկայ գերման նշանաւոր հեղինակների ընտրելագոյն կտորների հաւաքածոյ կատարւեցաւ, նա ուղարկեց Յոյս անւամբ մի յոյժ սլրուն, բանաստեղծական մի ալէկոծութիւն։ Վերջին ատեններս ռէալիստական ոգին թափում է յաղթել։ Իր նախընթաց վէպը, Con fiocchi, զուտ իրական է, մի մթին, տխուր նկար դժբախտ, արևազուրկ մի կեանքի։ Մոբասանի ազդեցութիւնը երևում է հոս։ Դիւցազն է մի կառապան։ Ներելի է փափաքել, որ այդ վէպն, գեղեցիկ այնու ամենայնիւ, մնայ առանձին, իբրև օտար հողի վրայ մի արշաւանք, յաջող արդարև, բայց վտանգաւոր իր ապագայ արդարութեանց համար։

Դոհացնելու համար նրանց, որք կատարելագունին անգամ մի թերութիւն գտնել ներում են, դիտեմ սա ինքնին անկարևոր պարագան, որ իր ոճը, սահուն և յղկեալ թէև, անխնամ է երբեմն. ես տեսայ իր մի հատորը, ուր մի նուրբ և չար կնոջ ձեռք ստորագծած է դեղիճ (golb) բառը, որ ահագին թուով պատահում է։ Մի քիչ ուշադրութիւն՝ կարող է հեռացնել դրանք։ Մի ուրիշ կէտ սկզբունքի հարց է յարուցանում, ինչ որ աւելի լաւ էր չանէր։ Ժուպին անդիսէմիտութեան մի քանի տեղ վատ ածականներ է տալիս։ Ձուզելով քննել, թէ արդեօք յարմար է մի քրիստոնէի կողմանէ, դատապարտել մի տէնդէնցիա, որ, կրօնական նախապաշարումներէ զերծ, քրիստոնեաների վտանգող շահերը ուզում է պաշտպանել էապէս թշնամի ու զէնքերի խտրութիւն չդնող մի օտար ցեղի դէմ,—կարծում եմ վիպասանը ինչպէս և բանաստեղծը, արտիստը ընդհանրապէս, լաւ է դուրս և վեր մնան կուսակցական թունաւոր պայքարներից, որք վնաս կարող են հասցնել միայն իրանց արւեստին ու գործունէութեան։

Առնունք իր մի վէպը, Կոտրւած թեւեր, լաւագոյնը թերևս, մի հառաչանք դարավերջիկ քաղաքակիրթ մարդուն վշտաց, հառաչանք իր պատճառներով ու բացատրութեամբք ամբողջ մի ողբերգ։ Յոյժ պարզ է նիւթը. մի Տանիմարքացի երիտասարդ, Փրանսա ճամբորդելու եկած հօրը մահւան կսկիծը փարատելու համար, սիրահարւում է մի գեղեցիկ աղջկան, հիւրանոցում եղած իր մօր հետ, և յայտնում է իր սէրը։ Նա չի կարող ընդունել, զի տղայական անմտութեամբ աւելի քան չանցանքով սխալ քայլ մ'առած է արդէն, որու հետևանքն է հետի փոքր աղջիկը, զոր իբր իր քեռդուստրը ներկայացնում է։ Երիտասարդին պնդելուն վրայ, յայտնում է նրան իր անցեալը, և սրա սէրը բաւական զօրաւոր է լինում, երեք օր ներքին բուռն պայքարներէ ետք յաղթական մնալու. որոշում է հակառակ ամենայնի՝ ամուսնանալ նրա հետ, ու թէև նրա մայրն իսկ չէ հաւանում, հարսանիքը լինում է և տանում է իր կինը Տանիմարքայի մի փոքր ծովեզերեայ քաղաք. իր ընտանեաց հետ խռոված է արդէն իր ամուսնութեան պատճառաւ ու նևիրում է ինքզինք բոլորովին բարեգործութեան և նաւարկութեան, փոքր մի իօդով ժամերով ծովու վրայ մանն է գալիս, փոթորկի ժամանակ անգամ։ Իր հարստութիւնը թոյլատրում է իրան, կարօտեալների օգնել, հիւանդներին խնամել, աղքատ, որբ տղաներ դաստիարակել տալ, և ժողովրդեան սէրն ու երախտագիտութիւնը պատում են զինք. և տարիներն այսպէս հանդարտ անցնում են, առանց աղմկի, առանց դիպւածի, գրեթէ երջանիկ։ Գրեթէ. զի իր ստիպեալ անփորձութիւնը յաճախ մտածեցնել է տալիս իրեն, թէ ինչ կարող էր լինել, եթէ այն կապը չըլինէր, զոր երիտասարդ, սիրահար ժամերու ինքն անձամբ կապեց իր կեանքին։ Կոտրւած թեւեր—այդ է այլ ևս ապագան։ Սակայն կինն այնքան սիրալիր է և արթուն իր փափագները կատարելու, որ շատ բան մոռցնել է տալիս իրեն։ Աղջիկը մեծանում է արդէն, և սիրով ու զմայլմամբ, մի տեսակ պաշտամունքով, վարէ վեր, նայում է նրան, որ իր իսկական հայրն է կարծում։ Արդէն մի գեղեցիկ աղջիկ է, մեծ ու ազատ, խոհուն աչքերով, տղայ սրտով։ Իր հօրը ունեցած սէրը առաւելում է միշտ, և սա չէ կարողանում անտարբեր մնալ այն բուռն, սրտագեղ կրքին, որով արդէն կէս-կին դարձած աղջիկը, իր վիզը նետւելով, համբուրում է զինք, կարծելով մի հայր համբուրել։ Ամուսնանալու օրը արդէն գալիս է. «Ձեմ ուզեր կարգւել, մինչև որ գտնեմ մէկը, զոր բոլոր հոգւով սիրեմ, ինչպէս ես սիրում եմ. ասում է աղջիկը. «բայց ոչ, դարձեալ չեմ ուզեր քինէ բաժնւել!» յաւելացնում է. «և բաց աստի, չէ կարելի որ մէկը սիրեմ քեզի չափ. աշխարհումս չըկայ ոչինչ, ոչինչ, զոր չընէի քեզ համար»։ Այս տեսարաններէ ետք, նա խուսափում է նրան հանդիպելուց, շաբաթներով չէ խօսում նրա հետ, մինչև որ մի գիշեր, երբ մուրթին իր սենեակն է բարձրանում, նա՝ որ սանդուղքին վրայ սպասում է իրեն, լսելով համբուրում է զինք և հարցնում է ինչու չարացաւ իրեն... Կինը հանդիպում է մի այդօրինակ տեսարանի և մի ցաւալի բացատրութիւն է տեղի ունենում երկու ամուսնոց միջև. այրը խոստովանում է իր սէրը, իր ներքին պայքարները, իր վիշտն ու յուսահատութիւնը. որոշում են, երբէք աղջկան չիմացնել, որ նա իր հայրը չէ. նոյն օրը նա հեռանում է իր իօդով, սոսկալի փոթորկի ժամանակ Գիշերը, պառկելու գնացած ատեն, ասում է աղջկան. «չիշէ, որ ոչ ոք քեզ այնպէս չի սիրի որպէս ես», և առաւօտուն մի ծաղկեայ պսակ է կախում նրա սենեակի դրան վրայ—Այդ օրը նա չէ վերադառնում, և ոչ հետևեալ օրը։ Աղջիկը, պատուհանը կանգնած, աչքերը սևեռած, սպասում է—ի զուր։ Ինկնում է վերջապէս ծովեզերքը, հարցնում անցորդներին, ով որ պատահի-ոչ մի լուր։ Վերջապէս գտնում են-դիակը, ծովեզերքի հեռաւոր մի կէտում. բերում են քաղաք թաղում որոշեալ դամբարանը։ Աղջիկը անցնում է հոն օրեր ամբողջ, լալով երբեմն, երբեմն նստած, անշարժ, կարծես խօսելով մեռեալին հետ... «Եւ ես կոչեցի քեզ քու անւամբդ, և դու լսեցիր ինձ... դու իմս ես այլ ևս, դու պէտք է գաս». ըսած էր նա մի անգամ։ Աղջիկը յիշում է այդ խօսքերը։ Եւ մի գիշեր, երբ երկնքում փայլում է լիալուսինը, կարծում

է լսել, պատուհանի մօտ կանգնած, իր հօրը ձայնը, որ զինքը կանչում է։ Վրայ է հասնում մայրը, ահաբեկած։ Նա արդէն վշտանում է, որ աղջիկը, իր վշտին մէջ թաղուած, ոչ մի սփոփանք չէ ընդունում, չէ ուզում մխիթարուել։ «Մխիթէ ես չըկամ, մայրդ! գոչում է. «այդքան վշտանում ես նրա մահուան վրայ, որ քու հայրդ անգամ չէր». հոգիս ասած, զլջում է արդէն, շատ ուշ։ «Հայրս չէր. այդ չըպէտք է ասէիր». ու յետոյ, խորհրդածութենէ մետք. «և սակայն գիս սիրում էր ամեն բանէ աւելի. նա ասաց ինձ, մեռնելուց հէնց առաջի օրը»։ Հիւանդութիւնը, հիւծմունքը գալիս են, և ինչ ճար որ փնտռում է մայրը, ոչինչ չէ յաջողւում. համպուրկ գալիս է նրա հետ, ուր սակայն, ճիշտ նոյն պահուն, քօլէրան ճարակում էր, և բոլոր քաղաքացիք հեռանում էին, մինչդեռ ինք, որ ամիսներէ ի վեր լրագիր չէր կարդար, անտեղեակ գնում է հոն։ Փոդոցը կորցնում է իր աղջկան, զոր տանում են մի հիւանդանոց, ուր մի քանի օրէն քօլէրայէ վախճանում է։ Մայրը առանձին, ծերացած վշտէ, յուսախաբ և անյոյս, կոտրած թեւերով դառնում է Աւստրիա, իր մօր մօտ, լալ, մոռնալ։

Պոհէմիոյ զաւակ և իր մայրենի լեզուն սլաւ, չաճախ ընտրում է Ջուպին իր հերոսները ռուսներ. ինչպէս Պորիս Լէնսկի նոյնանման վէպին դիւցազնը, և որ գլխաւոր դեր է խաղում Ասպէին և Հանճարի մը պատմութիւնը վէպերին մէջ, որք իր լուսագոյներէն են։ Եւ խիստ լաւ ճանաչում ու թափանցում է սլաւական ուղիղ, խորին ու երազուն ոգին, մասամբ օտար գերման գրականութեան։ Իսկապէս երիտասարդ տակաւին, գրած է արդէն բազմաթիւ վէպեր, որոց շատերը առաջնակարգ գործեր են։ Ինքն իսկ պատմած է յոյժ սիրուն կերպով իր առաջին գրական քայլերը Առաջին գրի պատմութիւնը հաւաքածոյին մէջ։ Իր հետևեալ գրքերը նախագասում է Ջուպին. Ասպէին, Ուսի կըզայ այս խուովութիւնը յաշխարհ, Կոտրած թեւեր, Հանճարի մը պատմութիւնը և Con fiocchi. Օրիորդ և նիհրւած արեւստին, ապրում է Պոհէմիա գեղարւեստական մի դղեակում, Bon Renos, իր մօր ու քրոջ հետ, որ յաջող պատկերհան է։ Իր յաճախակի ճամբորդութիւնները, որք կարողացրած են զինք օտար կեանք և բարքերը այնքան ճշգրիտ նկարել, ծանօթացրած են զինք գրական ու այլ մեծ անձնաւորութեանց հետ, ընդ որս Դուրկէնիեւ, որու վրայ ինձ մի մասնաւոր նամակի մէջ հետաքրքրաշարժ գրածը չիշելով՝ աւարտեմ սոյն առաւելապէս համակրելի վիպասանուհւոյն ուսումնասիրութիւնը։ «Դուրկէնիեւին ճանչցած եմ և մինչև անգամ նա խրախուսեց գիս սկիզբը։ Ռոլոր կեանքումս պիտի չիշեմ այն եղանակը, որով ինձ ասաւ. «Ձարունակեցէք, դուք ունիք ամեն ինչ որ պէտք է՝ յաջողելու համար». Նա սիրում էր գերմաներէն խօսել, զի շատ լաւ խօսում էր։ Պարիզ հանդիպեցայ իրեն. տաղն և ուժ տարեկան էի, և նա բարութիւն ունեցաւ կարդալ իմ մի քանի փոքր պատմութիւնները, զորս Բրակայի մի թերթ բարեհաճած էր տպագրել։

«Իբրև գրագէտ, Դուրկէնիեւին շատ բարձր դասում եմ։ Նա ինձ համար դարուս երեք մեծ նովելիստներէ մին է, միւս երկուսը լինելով Կի տը Մոբասան և Բրոսբէր Մէրիմը»։

Եթէ Օսիբ Ջուպին համեստութեամբ զինք չէ չիշում, մեզ պարտ է իր անունն ևս յաւելացնել մեծ նովելիստ և վիպասանների անւանց։

ՇԱՀԷՆ ԱԼԼԱՆ

Վիէն, 15 ապրիլ, 1897.

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ

—

Բարձրագոյն հրամանով Կովկասեան զօրաբանակի հրամանատար զեն. ատ-կաւալէրի իշխան Ի. Ֆ. Ամիլախուարի նշանակւում է առանձին յանձնարարութիւնների համար Կովկասեան զինւորական շրջանի զօրքերի հրամանատանի մօտ. իսկ Կովկասեան զբէնադէրեան դէւիզիայի գլխաւոր զեն.-լէյտ. Է. Ա. Ջէզէման Կովկասեան զօրաբանակի հրամանատար է նշանակւած։

—

Կովկասի իշխան Կառավարչապետի հրամանով Երեւանի ոստիկանապետ Առաքելեան նշանակւում է Երեւանեան նահանգի, Շարուր-Դարալագեազի գաւառապետ։ Արձակւում են իրանց պաշտօններից Բորչալու գաւառի գաւառապետ իշխան Սումբաեով եւ նոյն գաւառի կարգապահութեան վերահսկիչ միլիցիայի իւնկէր Զոչիեւ։

— —

Պ ր ո ց ա կ ա ն

Թագաւոր Կայսր բարձրագոյն բարեհաճեց բոլոյատրել հոգեւոր սեմինարիաների առաջին կարգի լմնցաւարտներին մնել Իւրիեւի (Դորպատի) համալսարանի բոլոր ֆակուլտետները (բացի աստւածաբանական ֆակուլտետից), նախապէս ենթարկւելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան որոշած քննութեան։ Այսպիսով Վարշաւայի (Պատմա լեզւագիտական եւ Ֆիզիկո-մաեմատիկական ֆակուլտետները), Տոմսկիի եւ Իւրիեւի համալսարանները կարող են մնել հոգեւոր սեմինարիաների աշակերտները. իսկ մնացած համալսարաններում կընդունւեն միայն հոգեւոր սեմինարիաների այն աշակերտները, որոնք գիմնազիական դասընթացքում քննութեամբ ձեռք բերած վկայագիրներ կընկերակայցնեն։

—Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը վճռել է դիմել բոլյատրելու Վեհ. Կաթուղիկոսին առաջիկայ ուսումնական տարում բանալու 7-րդ դասարան, ուր բացի աստւածաբանական առարկաներից կ'աւանդւեն նաեւ գիւղատնտեսութիւն, առողջապահութիւն եւ մանկավարժութիւն։

—Թիֆլիսի I արական գիմնազիում աւարտել են 58 աշակերտ, որոնցից 12 հայեր, հետեւեալներն են. Ս. Աղաբաբեան, Ս. Աղաբէգեան, իշխ. Արղութեան-Երկայնաբազուկ, Ա. Դուրգենեան, Ֆ. Քաշիտեան, Լ. Մելիք-Էյնաթեան, Յ. Փոնդոյեան, Ա. Տեր-Միհէլեան (*ոսկէ մէդալով*), Թուբէն Ձգնաւորեան, Ն. Ենանեան, Յ. Քալանթարեան եւ Ա. Սարաջեան։ II արակ. գիմնազիոնը

աւարտել է միայն մի հայ—Ն. Պապեանց եւ սպացել է ճանապարհածախ համալսարան գնալու. Բուբայիսի արական գիմնազիօնը աւարտել են 2 հայ—Մ. Սարգսեան եւ Ռ. Փիրադեան։ Թաճնակի ար. գիմնազիօնում—7 հայ, որոնք են. Աւետեան, Վրթանեսեան, Միրզոյեան, Մնացականեան, Մուրադեան, Յովհաննիսեան եւ Զոլկովսկիեան։

—Թիֆլիսի ռեալական դպրոցի 22 աւարտողներից 7-ը հայ են. Յ. Յարութիւնեան, Մ. Յարութիւնեան, Ս. Զալալեան, Յ. Մանթաշեան, Ռ. Սիմեօնեան, Ս. Զահումեան եւ Գ. Հէջուբեան։ Լրացուցիչ IIV դասարանը աւարտել են իրանց ուսումը շարունակելու. բարձրագոյն մասնագիտական հաստատութիւնների մէջ 4 հայ, որոնք են՝ Ս. Աւետիսեան, Ս. Փիրալեան, Ա. Դաւթեան եւ Ա. Եարդուլեան։

ԼՈՒՐԵՐ

Կովկասի Կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցինը իր ամուսնու հետ Թիֆլիսից կ'ուղեւորուի այսօր, յունիսի 22-ին ռազմավիրական ճանապարհով Կովկասեան հանքային ջրերը եւ Թիֆլիս կը վերադառնայ օգոստոսի 1-ին եւ նոյն օրը կը ղնայ Կոջոր։

—

Բերլինի լրագիրները հաղորդում են, վերջնականապէս որոշուած է որ Գերմանիայի կայսր Վիլհելմը ուղեւորուի Պետերբուրգ օգոստոսին։ Նրան կ'ուղեկցէ կայսրական կանցլէր իշխան Հոհէնլոյէ։

—

Որոշուած է արդէն Հիւս. Կովկասում բանալու այգեգործական դպրոց, որի ծրագիրը ներկայացուած է երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան հայեցողութեան։

—

Լոնդոնից Пет. Вѣд. հեռագրում են. «Լսւում է, որ թագուհին մտադիր է գահից հրաժարւել յօգուտ Ուէլսի պրինցի (իր որդու), ցանկանալով անձամբ մասնակցել նրա թագադրութեան»։

—

Հայաստանում ընֆորմներ մտցնելու համար նշանակուած Զաքիր-փաշան, հրաժարական է ներկայացրել, պատճառաբանելով իր հրաժարականը նրանով, որ ներկայ խառնակ ժամանակում իրան անզօր է զգում կատարելու իրան վրայ դրուած յանձնարարութիւնը։ Հարցնում ենք, եթէ հիմա Զաքիրը չէ կարողանում իրագործել ընֆորմները, հապա էլ ե՞րբ պէտք է իրագործէ, երեւի նոր կոտորածների ժամանակ եւ ռեֆորմներ ասելով բարձրագոյն կոմիսարը ուրիշ բան է հասկանում...

—

Զուիցերիայի նախկին նախագահ Նումա Դրոզի թեկնածութիւնը Կրէտէի ընդհանուր նահանգապետութեան համար վճռուած պէտք է համարել։ Դրոզի թեկնածութիւնը ֆրանսիական կառավարութիւնն է առաջարկել և, ինչպէս երեւում է Նուս. գործակալութեան հեռագրից (17-ին յունիսի), նա համաձայնել է ընդունել այդ պաշտօնը հետեւեալ պայմաններով. 1) 200,000 ֆունտի փոխառութիւն, որը կրկատարւի պետութիւնների միջամտութեամբ. 2) շուտով հեռացնել տաճկաց բերդապահ զօրքերը. 3) կազմակերպել զօրքերը օտարահպատակ և տեղական ոյժերից. 4) ժանդարմերիան կազմակերպել շէյցարացիներից և բէլգիացիներից և 5) ինքնավար վարչութեան կանոնադրութիւնն առաջարկել Կրէտէի ազգային ժողովի քննութեան։

—

Нов. Вр. իր աշխատակցի բերանով սկսում է քար խառնել և Նումա Դրոզին ուրիշ գոյներով նկարագրել. նրա ասելով, որ ի հարկէ մեծ յանցանք չէ, Դրոզը յունասէր է և թէ նա ստորագրել է Զուիցերիայում յօգուտ յոյների հրատարակուած հրաւէրին։ Բացի սրանից Դրոզին գովաբանելով իբրև շատ ազնիւ և նշանաւոր անձն, պարոնն ասում է. «Դրոզի հայեացքները արեւելեան հարցի մասին պարզ են և ակնյայտնի նրանից, որ նա անցեալ տարի Զուիցերիայում գործող հայկական կոմիտէի գլուխ էր անցած» և վերջապէս պարոնը «ռուսական շահերի տեսակէտից նայելով գործին Արեւելքում», կամենում է Դրոզի թեկնածութիւնը անվստահելի կացուցանել և գրգռել Տաճկաստանի ատելութիւնը, թէ Դուռը վճռապէս կրգիմադրէ նրա նահանգապետութեան։

Բայց ի տխրութիւն պարոնի, վերջին հեռագիրները ցոյց են տալիս, որ Դրոզի թեկնածութիւնը վճռուած բան է և ոչ մի պետութեան կողմից արգելք չկայ։

—

Հարց է ծագել Արմաւիր գիւղաքաղաքը դարձնել քաղաք։ Արմաւիրի բնակիչների շատ մեծ մասը չէրքեզ-իւօս հայեր են։

—

Վերջապէս հայ որբերի վիճակը հոգացողութեան առարկայ է դարձել Կ. Պոլսում և տեղական լրագիրները սկսել են իրանց ճոռոմաբանութիւնները այդ հարցի մասին։ Սակայն մինչև դրանք կը վիճաբանեն, կամ Պատրիարքարանը կը վիճակն այնքան անտանելի կը դառնայ, որ նրանք ստիպուած կը լինեն դիմելու լսմբերով այլանդականների գիրկը։ Հողմքական և կաթոլիկ միսիօներները բացել են Հայաստանի կենդրոններում որբանոցներ։ Խարբերդում, Դիարբեքիրում, Վանում, Ակնում և ուրիշ քաղաքներում կան որբանոցներ, ուր խնամւում են երկու սեռի բազմաթիւ որբեր։

Մենք դեմ չենք այդ աստւածահաճոյ գործին, եթէ միայն այդ միսիօներները դաւանափոխական ձգտումներով չեն տոգորուած. բայց փաստը ցոյց է տալիս, որ տգեղ դէպքեր անպակաս են...Կրցանկայինք որ բարեգործութիւնը առանց դիմակի կատարէր։

—

Կիսասպաշտօնական Кавказъ լրագրի խմբագիր Վելիչկոն արձակուրդ ստացել և Թիֆլիսից հեռացել օդափոխութեան համար։ Յիշեալ թերթի ժամանակաւոր խմբագիր է նշանակուած Մ. Ռւսպենսկի, որ մի ժամանակ Нов. Обозр. խմբագիրն էր։

—

Յունիսի 15-ին գիշերը բարձրացած սաստիկ փոթորիկը մեծ վնասներ է հասցրել Ղարայազ գիւղի բնակիչներին։ Փոթորիկը սյակոտել է ծառերը, քշել տարել խոտի դէզերը և ոչնչացրել պտղեղէնը։

—

Ռոստով-Դոնեան մի ընկերութեան, որի անդամները հայեր են, թոյլատրուած է հիմնել ծխախոտի ընկերութիւն։

—

Մինիստրութեան մէջ հարց է բարձրացուած փոխելու կլասիքական գիմնազիօնների աշակերտների համազգեստների ձեւը։

—

Լրագիրների ասելով այս տարի Կովկասում հունձը լաւ կը լինի։ Միայն Հիւս. Կովկասում հացաբոյսերը վնասուած են։

—

Թիֆլիսի գաւառի Նովո-Նիկոլաևա գիւղում, երեւացել է եղջիւրաւոր կին-դանիների մէջ մի ինչ որ հիւանդութիւն, որ զոհեր է տանում. յունիսի 8-ից մինչև 15-ը հիւանդացել են 10 գլուխ, որոնցից 5-ը սատակել են։

Խառն լուրեր

Կ. Պոլսում տաճիկ զինուորական կուսակցութիւնը չի ուզում վէնքը վայր դնել։ Այդ կուսակցութիւնը բոլոր ոյժը գործադրում է, ազգային շարժումն առաջացնելու։ Զանազան յաղթական երգեր, թերթիկներ են լոյս տեսել, որոնք երգում են մուսուլմանի զինուորների հերոսութիւնը։ Վերջերս էլ տպագրել են մի քարտէզ, Թեսալիան միացրած Տաճկաստանի հետ։

—Լրագիրները հաղորդում են տաճիկների նոր կողոպտումների մասին, որոնց մասնակցել են տաճիկ սպաներ։ Նոյն իսկ ինքը Էդհէմ փաշան իր տունն կ. Պոլիս է ուղարկել պրինց Կոստանդինի Լարիսսայի պալատի կահ կարասիքը։ Բոլոր յունական եկեղեցիները կողոպտած են, իսկ այն մզկիթները, որոնք փակած էին, բացել են և սկսել են աղօթքներ նրանց մէջ։

—Տաճիկ աղբիւրից պաշտօնապէս հաղորդում են, որ Յունաստանից Մակեդոնիա են խուժել չորս ռազմական խմբեր։

—Դուրը տեսնելով պետութիւնների համերաշխութիւնը, սկսել է հասկանալ, թէ իր ծրագրից պէտք է հանել Թեսալիայի միացման հարցը։

—Էդհէմ փաշան մի զեկուցում է ուղարկել կ. Պոլիս, որից երևում է թէ Թեսալիայում գտնուած 4,000 ալբանացիներ յայտնել են նրան, որ իրանք չեն կամենում հեռանալ Թեսալիայից, մինչև այդ նահանգը չը-միացվի Տաճկաստանի հետ։

—Դուրը մերժեց Յունաստանի առաջարկութիւնը գերիները փոխադարձաբար վերադարձնելու։

—Լուրեր են պտտում, որ Հայաստանը և Պարսկաստանը նոր դժուարութիւններ են պատրաստում Պրան համար. բուլղարական սահմանից էլ յուզիչ լուրեր են գալիս։

—Nord-ը Դրոզի Կրէտէի ընդհանուր-նահանգապետութեան թեկնածու լինելու մասին տարածուած լուրերը ճիշտ չէ համարում. Մեծ պետութիւնները դեռ վերջնականապէս չեն մշակել կղզու ինքնավարութեան ծանրամասնութիւնը, որից յետոյ կարելի կըլինի նահանգապետ նշանակել։ Մինչև այդ, կղզու խաղաղացնելու համար կընշանակուի ժամանակաւոր նահանգապետ, մինչև ընդհանուր-նահանգապետի ընտրութիւնը։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ խաղաղութեան դաշը շատ շուտով կըստորագրուի։

— —

Մեր պատկերները

Մարի Սթիւարտի հանդիպումը (Շոթլանդիայի թագուհի) Րիչչիոյի հետ։

Վալլարիի նկարից. փորագր. Նէալի։

Շոտլանդիան, որ այժմ Մեծ Բրիտանական թագաւորութեան մի մասն է կազմում, Անգլիական տիրապետութեան տակ ընկնելուց առաջ մի անկախ պետութիւն էր։ Մարի Սթիւարտը նրա վերջին թագուհին եղաւ։ Նրա գեղեցկութիւնը, ռոմանտիկական արկածներով լի կեանքը եւ վերջապէս նրա եղերական, ցնցող վախճանը այդ կնոջը պատմութեան մէջ ամենահռչակաւոր դարձրին։

Ներկայ պատկերը ներկայացնում է, թէ ինչպէս նա առաջին անգամ հանդիպում է Իտալացի առանց տոհմական ծագման եւ ցեղի Րիչչիոյին, որի մի խոհարարութիւնն իր բամբիռն էր։ Բայց նա մատաղ, ուժեղ էր ու գեղեցիկ ձայն ունէր։ Թողնելով իր հրաշալի հայրենիքի մշտակապոյտ երկինքը, նա թափառում էր անտուն։

Շոտլանդիայում թափառելու ժամանակ նա պատահմամբ մտնում է արուեստական ապարանքին, եւ յոգնած, ջարդուած՝ վայր ձգում ուսերից պայուսակը եւ բամբիռը ու արուեստի շէն սանդուղքների նստարանի վրայ նստելով՝ քնում է, հանգստանում մատաղ, առողջ մարդու անաղմուկ խոր քնով։

Այդ միջոցին Մարի Սթիւարտը իր պալատականների հետ զբօսնելու դուրս գալով, յանկարծ կանգ է առնում, նիւացած նայելով ննջող պատանու վրայ. նրա վառ երեւակայութիւնն իսկոյն ստեղծում է ամբողջ պատմութիւն, իսկ մնացածն էլ բարի սիրտը իմնն է շարունակում։ Եւ ահա Րիչչիոն երեւում է արուեստում, դառնում է Մարի Սթիւարտի սիրելին եւ մի քանի ժամանակ ամենազօրեղ դիրք է բռնում։ Բայց Րիչչիոյին երկար չը-վիճակուեց արուեստական ազատ կեանքը վայելել։ Շոտլանդական գոռոզ ազատականները անչափ զայրացան նրա անձնագում իտալացու հետ ունեցած ընտանեկան վերաբերմունքի համար։ Եւ բառն Դուգլասը նոյն իսկ Մարի Սթիւարտի ներկայութեամբ սպանեց Րիչչիոյին։

— —

Ընդդիմախօսութիւն

ՆԱՐԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ *)

Երեւան, 11-ին մայիսի։

Այժմ, երբ արդէն հրապարակով բացատրուեց հարցը և բացատրողը եղաւ ինքն պ. Յովհաննիսեանը, մենք ի հարկէ չէինք պահանջիլ, որ ստուգուէր թէ արդեօք ներկայացումից զուտ արդիւնք եղել է 40-50 ր. թէ աւելի *)

*) Տես Տարազ № 22.

**) Յամենայն դէպս վստահ բացատրութիւնը թողնում ենք ուսուցիչները պ. պ. Շուրայեանին և Ճաճիկեանին, որոնք տոմսակները ծախում էին յատկապէս Թեմ. դպր. էքսուր աշակերտների օգտին և թէ վկայել են շատերի առաջ, որ 75 ր. տոմսակ յատկացրած էր բացառապէս աշակերտների օգտին։ Այդ նպատակն աչքի առաջ ունենալով վալ չուրեան անգամները մլայն 10 ր. տոմսակ են դնել։

և որ պ. հոգ. Տէր-Խաչատրեան իր գրպանից տալով արդիւնքի երրորդ մասը՝ 15 ր. յօգուտ էքսուր աշակերտների, ժամանակին հոգաբարձական նիստի արձանագրութեան մէջ և թէ մտից մատեանում մուտք չիշուած է թէ պարտաճանաչ հոգ. պ. Տէր-Խաչատրեան և թէ նոյնքան պարտաճանաչ տեսուչ պ. Յովհաննիսեան որոշել են այդպէս հարթել խնդիրը փասը հրապարակ հանելուց յետոյ միայն. կրկնում ենք՝ այդ չենք պահանջում, ընդունելով պ. Յովհաննիսեանի բացատրութիւնը ճիշտ։ Բայց թոյլ տուէք պ. Յովհաննիսեանի ճակատին դրոշմել հրապարակով այս խօսքերը. «Իբրև տեսուչ պ. Յովհաննիսեան անսիրտ կերպով է վերաբերուել դէպի էքսուր աշակերտները, որոնք Բէօմիւրի 20% ցրտի ժամանակ ուսումնարան էին յաճախում ցնցոտիների մէջ» (իրան լուսաբերը Մշակի 11 համարում)։ Ի՞նչպէս, դուք պ. Յովհաննիսեան գրաւոր դիմում անելով Փէյէկեան քոյրերին՝ խնդրում էք նրանց ներկայացումից մաս հանել էքսուր աշակերտների օգտին, Թեմ. դպրոցի ուսուցիչները ծախում են տոմսակներ, նոյն իսկ աշակերտներից շատերը տոմսակ են գնում, ներկայացումը տրուում է, օրիորդների հետ հաշիւ տեսնում է պ. Գ.ր. Տէր-Խաչատրեան, որը նրանց հետ «ապարդիւն վէճ չը-բանալու համար լաւ է համարել իր գրպանից տալ էքսուր աշակերտների օգտին 15 ր.» և այս բոլոր ժամանակ իբրև տեսուչ, նախանձախնդիր դպրոցական շահերի ոչ մի բանով չէք հետաքրքրել, «ոչ մի բանի մէջ չէք խառնուել», ինչպէս դուք էք ասում. ո՛, մի այդպիսի անսիրտ վերաբերմունք տեսչի կողմից դէպի ցնցոտիների մէջ կորած էքսուր աշակերտները՝ աներևակայելի է. է՞ որ Վարչութեանս էիք մեղադրում այդ բանում. տեսաք ինչպէս բռնեցիք, հէնց այդ էինք ուզում, որ դուք խոստովանէք և ձեր այդ հրապարակական խոստովանութիւնը ձեզ արժանի պատիժն ենք համարում։

Սրանով վերջ ենք տալիս մեր խօսքին, արհամարհանքի մատնելով յօդուածի մնացած սոփեստութիւնները և ծիծաղելի բառախաղութիւնները. այսքանը բաւական է հասկացնելու պ. Յովհաննիսեանին, որ կրթուած մարդուն անարժան և տգեղ վարմունք է լոկ անձնական հաշիւներից և կրքից դրդուած վերկենալ և ստոյգ իրողութեան վերաստուգող չանճնաժողովի՝ օգտակար եւ բարեխիղճ գործունեութիւն և ար-

ժանացած ընկերութեան ընդհանուր ժողովի միաձայն գոհունակութեան։

Բարեգործական ընկերութեան Երևանի Վարչութեան նախկին անդամներ՝

Հռիփսիմէ Տէր-Մկրտչեանց. Գէորգ Ղարաջեանց. Տիգրան Տէր-Յակովբեանց. Սիրական Տէր-Մարտիրոսեանց. Սարգիս Աւետիսեան։

— —

Նոր հրատարակութիւններ

—

Զնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ նոր հրատարակութիւնները

I

Այբենարան առանց ուսուցչի կարդալ սովորելու համար (94 պատկերներով)։ Յօրինեց պ. Յովհ. Տէր-Միրաքեանց։ Հեղինակը, որ հետևել է Վոլպէրի և Հէրնիաևսկու մէթոդին, իր գրքի առաջաբանի մէջ ասում է. «Ներկայ գրքոյկը յօրինուած է բոլորովին անգրագէտ և ոչ մի ժամանակ գիր չըճանաչած մարդկանց ի նկատի ունենալով»։ Եւ այսպէս անգրագէտը առանց ուսուցչի օգնութեան պէտք է կարդալ սովորէ։ Թէ որքան կարող է յօրինողի ձեռնարկը յաջողութիւն ունենալ՝ այդ թողնում ենք վերլուծելու մեր մանկավարժներին. առ այժմ նկատենք, որ վարժութեան համար առաջ բերուած պատկերները իրանց անաջող բացատրութեամբ և օտար բառերով մեծ դժւարութիւն պէտք է պատճառեն սովորողին։

Գիրքը տպուած է Նոր-Նախիջևանում, Ա. Զամինեանի և Վ. Քիրլեանի տպարանում սոյն թ։ին. գինը՝ 35 կոպ.։

II

Դաւիդ Կոպպէրֆիլդ. Դիկկէնսի, պատանեկան հասակի համար թարգմ. Պ. Պ.; հրատարակութիւն Թիֆ. Հայ. Հրատ. Ընկերութեան։

Հրատ. ընկերութիւնը իր երկարամեայ գործունէութեան ընթացքում վերջապէս տալով հռչակաւոր հեղինակի գեղեցիկ վէպը, մեծ ծառայութիւն է անում ընթերցող հասարակութեան։ Գիրքը միջադիր է, տպուած Թիֆլիսում, Ս։Ն. Մարտիրոսեանցի տպարանում, գինը՝ 1 րուբլի։

III

Ազգագրական Հանդես. Բ. գիրք։ Հրատարակիչ պ. Եր. Լալայեանց լոյս հանելով իր Հանդիսի երկրորդ գիրքը —թէև շատ ուշ—մեր հետաքրքրութիւնն է շարժում նրա նիւթերի առատութեամբ և ծաւալով. նա բաղկացած է 520 էջերից և 26 պատկերից, տպուած Մ. Թօտինեանցի տպարանում, գինը 2 րուբլի։

Մի ուրիշ անգամ կըտպագրենք մեր մասնագէտ աշխատակցի քննադատութիւնը այդ հատորի մասին։

IV

Ժոռխ. Յովսէփ Կ. Ճանիկեանի։ Գրքոյկը իր տարօրինակ վերնագրով կարդալ է դրդում ընթերցողին և կարդացողը չի փոշմանում այդ գրքի ընթերցմանը նւիրած մի ժամւայ համար։

Գրքոյկը տպուած է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանցի տպարանում, գինը՝ 40 կոպ.։

V

Հռ. կինը —Ա. Ահարոնեանի. Նիւթեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար։ Հրատ Թիֆ. Հայ. Հրատ. ընկերութեան։

Նոյն հեղինակը Հռ. կնոջ մասին տարիներ առաջ Տարազում յօդւածներ ունի պետեղած։ այժմ այդ հետաքրքրքիր նիւթերը ժողովելով և լրացնելով՝ կազմել է վերոյիշեալ գիրքը։ Տպագրուած է Թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանցի տպարանում, գինը՝ 40 կոպ.։

VI

Նելլոն եւ Պատրաշը — Ուլդի. Թարգմ. ռուսերէնից։ Այս գրքոյկը պատկանում է «Նւէր մանուկներին» անունը կրող հրատարակութիւնների շարքին և թւով 7-րդն է։ Գրքի նիւթը վատ չէ, թարգմանութիւնը՝ յաջող. միայն կըցանկայինք, որ այդ գրքոյկների հրատարակչութիւնները աշխատէին տպագրել նաև ինքնուրոյն գրւածքներ, մեր հեղինակների, մանկական գրողների աշխատութիւններից, և այդ կարծում ենք դժւար չէր լինիլ։

Գրքոյկը տպուած է Յ. Մարտիրոսեանցի տպարանում, գինը՝ 10 կոպ.։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳԱՆԻ մասին մի աշխատութեան համար հարկաւոր են հետեւեալ տեղեկութիւնները.

Ա. առուտրական դեպքեր առաջոյ կարգի պայմանագրում. Բ. ընտանեկան նշանաւոր խոռվարութիւններ եւ դրանց արդիւնքը. Գ. ապահովագրի դեպքեր—դրանց շարժառիթները, հետեւանքները, վերջնական ելքը: Հոգեւոր իշխանութեան յունած դիրքը այդ գործում, նրա վճռի մոտիվները եւ այլն մանրամասնութիւններ այդ խնդիրների վերաբերմամբ:

Բացի այդ, մի շարք կանոններ կարծիքներ առուտրական մասին. թէ ինչպես հին մտածում առուտրական մասին որիորդ ժամանակում, ինչ տեսակ հին պատկերացնում առուտրութիւնը, ինչ պարտականութիւն հին զգում այն ժամանակ առուտրականի վերաբերեալ, յետոյ ինչը ինչպես գտան, որն է իրանց կարծիքով բախտաւոր եւ օրհնաւոր առուտրութիւնը ինչ եւ ինչ եր պակասում իսնամել իրանց նախ քան առուտրանալը եւ այլն եւայլն:

Մի խօսքով այս խնդրի մասին բազմակողմանի տեղեկութիւններ:

Հաւատացած ենք, որ մեր ընտիր անձինք եւ մեր յարգելի տիկիններն չեն զլանալ այս գործում մեզ օգնել:

Հասցէն՝ Баку до востребованія Рубену Огавджанянъ.

Ռ. Յովհաննջանեան

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Эконом. общества Ю. А ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.
Головинскій пр. д. Сергѣева № 7
10—8

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 96 և 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Агбюръ կամ Таразъ.

Թարգմանւում է

Սերաստիան Կնայպի

„МОЕ ЧУДЕСНОЕ ВОДОЛѢЧЕНІЕ“

հեղինակութիւնը։

Дозв. ценз. Тифлисъ, 21 іюня 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.